քով, սուլթանի կարգադրությամբ ամբողջ երկրում չափահաս տղամարդկանցից 20-ական ակչե ավարիզ է հավաքվել և յուրաքանչյուր 20 տնից մի մարդ աշխատանքի լծվել[1]: Իսկ սուլթան Սուլեյմանի ժամանակ յուրաքանչյուր չորս հինգ տարին մի անգամ ամեն մի հարկատու հպատակից 20-ական «ակչե 'ավարիզ» է գանձվել[2]:

16-րդ դարի վերջին պետական գանձարանում եղած դեֆիցիտի հետևանքով «'ավարիզը» դառնում է օրինական ու մշտական գանձվող հարկ, որի չափը փոփոխական էր: Այսպես, Կոչիբեյի ասելով, եթե սկզբում յուրաքանչյուր տնից գանձում էին 20—70 ակչե 'ավարիզ, ապա հետագայում մինչև իսկ 300 ակչե[3]:

Հայտնի է, որ 16-րդ դարում Հայաստանի տերիտորիայում թուրք—դզլբաշական անվերջ պատերազմների հետևանքով պարհակային աշխատանքի պրակտիկան մեծապես տարածված էր. դա իրենից ներկայացնում էր ոչ այլ ինչ, եթե ոչ օրինականացված «'ավարիզ»: 1551 թ. մի հիշատակարանում Սեբաստացի Մինաս գրիչը գրում է.

«Յայս ամի եկեալ Վաղի փաշայն բազում և անթիւ զօրօք և գնաց գեպի յարևելս ի Շահասատան (Թավրիզ), և յոյժ նեղեցին և չարչարեցին զքրիստոնեայսն ի հարկապահանջութիւն: Եւ հանեն զբազում արհեստաւորս վասն շինութեան Ղարսայ բերդի, և անտի եկեալ գերեցին զԵրևանայ գաւառն և զքրիստոնեայս բազումս ի սուր և գերութիւն վարեցին և ոմանց փախստական լեալ ի լերինս և ի քարածերպս վիմացն յուսալով ի խնամս մարդասէրն աստուծոյ»[4]:

Մի այլ հիշատակարանում Զաքարիա Վարագեցին գրում է.

«Ի սոյն ամի բերաւ ջուրն Շամիրամայ ի քաղաքն Վան չորս ամիս բազում աշխատանօք երկիր և քաղաք ի վերայ դատելով և ապա բերաւ ջուրն զի ութ հազար սարակ (բանող ձեռք) քաղաքեն գնաց, թող զերկիրս և զայլս ի յոտար աշխարհէ»[5]:

«'Ավարիզի» մի տարատեսակը Թուրքիայում հանդիսանում էր «Սյուրսաթը» („Sür-sat"), որը թուրքերեն բառացի նշանակում է «քշիր ծախիր»: Այդպես էր կոչվում այն պատճառով, որ պատերազմների ժամանակ թուրքական բանակի անցած վայրերում բնակիչները պարտավոր էին բանակի կարիքների համար ապահովել մթերքներ, դարի ու հարդ՝ անասունների համար, իսկ անհրաժեշտության դեպքում բանակին «օգնել» լծկան անասուններով, կառքերով, բանվորներով, «քյուրեքչի» („Kürekçi"), «ազապ» („azap") և այլ անուններով:

Կոչիբեյը Սյուրսաթի մասին տալիս է հետևյալ բացատրությունը. «Այս հարկը (սյուրսաթը),— ասում է նա,— գանձվում է ռայայից պատերազմի ժամանակ: Սյուրսաթը տրվում էր դարու, հաճարի, ալյուրի, փայտի ձևով այն չափով, որ չափով որ որոշված է, և ռայաները իրենք կտանեն ամենաբարձր տիրակալի նշանակած վայրը: Մինչև որ անհրաժեշտ քանակի սյուրսաթ չհա-

[1] Solakzade tarihi, s. 321.

[2] *Ömer Lûtfi Barkan*, 'Avariz (Islam ansiklopedisi, I cilt, Istanbul, 1948, s. 16).

[3] *В. Д. Смирнов*, Кочибей Гömюрджинский... стр. 141.

[4] ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռագիր № 6272 եր. 250ա. նաև Ա. Գ. Հովհաննիսյան, «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», չհրատարակված աշխատություն, հատ. II, էջ 540:

[5] Նույն տեղում: